ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 240-Ա 07 մայիսի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐԻ ԱՐԾՐՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԶՈՀՐԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Միհրանուշ Սահակյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Սահակյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը՝ 2025 թվականի մայիսի 15-ից 2025 թվականի մայիսի 29-ը ներառյալ (10 աշխատանքային օր):

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Սահակյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների

կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոհրակ Մելքոնյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

07.05.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ